

**Պատասխաններ և գնահատման չափանիշներ
հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան**

Պատասխաններ

1. Ըստ բնագրի՝ – որովհետև երբ մեկը վիրավորում է մեզ, պետք է գրել ավագին, որ քամին ու ջուրը ջնջեն: Իսկ կատարած լավ արարքը պետք է փորագրել քարին, որ մնա և երբեք չմոռացվի: Լսելով ընկերոջ պատասխանը՝ տղան ներում հայցող հայացքով նայեց ընկերոջն ու ամոթահար կախեց գլուխը:
3. պեւ-ձևի, ժամանակի կապ, նան-համ. շաղկ., որտեղ-հար. դեր, ով-հար. դեր., հանիրավի-ձևի մկբ.
4. Դեմքին ապտակ ստացածը սուզվելով հայտնվեց լճի՝ լողն արգելվող վտանգավոր հատվածում: Ստորադաս նախ՝ ենթակա, որոշիչ:
5. ահագոու, հոգեցունց, հրաշք, գողտրիկ, սրտմաշուկ, անպարկեշտ, ժանտ, վանող, գորշ, ակնապարար,
6. հանիրավի-անիրավաբար, ոչ իրավացի՝ անարդար կերպով, ստեպ-ստեպ-հաճախակի վարսեղ-առատ, փարթամ վարսեր ունեցող, վարսեր ունեցող, ջրհորդան-թիթեղե խողովակ՝ տանիքից անձրևաջուրը հոսելու համար ծավի – կապույտ, մով, մավի, լաջվարդ, լագուր, լուրթ, երկնագույն երկնուղեշ- բարձրուղեշ, դեպի երկինք բարձրացող ուղեշներով՝ ճյուղերով, բռնազբոսիկ – շինծու, արհեստական, անբնական, կեղծ ներքինապետ- արքունիքի ներքին գործերը կառավարող պաշտոնյա, դագանակ-հաստ գավազան, մահակ, վարուժան- արու թռչուն
7. սիրտը պինդ-սիրտը փափուկ, սիրտը տաքանալ, սիրտը սառչել, երեսը պինդ, երեսը փափուկ, գլուխը բարձր- գլուխը կախ, խելքի տոպրակ- խելքից պակաս և այլն և այլն
8. ծաղկել- 1. ծաղիկներ արձակել, ծաղիկները բացվել, 2. բորբոսի փառ կապել, բորբոսնել, մզլոտել/հացը ծաղկել/, 3. փխբ. ծաղկունքով պատվել, կանաչել, 4. փխբ. հասակ առնել, ֆիզիկապես փարթամորեն աճել, 5. փխբ. օրեցօր գեղեցկանալ, 6. փխբ. բուռն կերպով զարգանալ, 7. տնտեսապես վերելք ապրել, բարգավաճել, 8. եռանդուն գործունեություն ծավալել, 9. ձեռագիրը ծաղկանկարել՝ ծաղկազարդել
9. *Մորփեռոսի գիրկն ընկնել* – խոր քուն մտնել, հուն. դիցաբանության մեջ՝ քնի, երազի թևավոր աստված Մորփեռոսի անունով, *ճաշից հետո մանանեխ* – կատարված գործից հետո առաջարկվող օգնություն

Գնահատման չափանիշներ

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար 0,25 միավոր: